քար է, ասումէ Գար. վ. Սրուանձտեան. Նորա վերայ նուրբ արուեստով քանդակուած կայ երկու արծուի յաջմէ թագաւոր, ի ձախն թագուհի, և ի կեդրոնին մասունք կամ ակն դնելու տեղ մը, ուր Ս. Լուսաւորչի ակրայն դրած են եղեր. այս գործ հիանալի և աննման, կաւանդեն թէ Կոստանդիանոս ընծայած է մեր Տրդատին կամ Սեղբեստրոս՝ Լուսաւորչին. Շատ անցորդք և հնախոյզք, ասումէ նա, յատկապէս հեռի տեղերէ եկած են զայս տեսնելու, և հիացեր են, շատ ալ ջանացեր են արծաթով կամ այլ և այլ խոստմամբ և հատուցմամբ հանել զայն վանքէն, ինչպէս նաև հնարքներ ու հրապոյր ի գործ դնելով, սակայն չեն յաջողած։» Այս հնութեան համար Ինճիճեանը գրումէ այսպէս. Դեղթափ կոչեցեալ վէմ՝ յորում փորագրեալ կան շորք աւետարանիչք. զոր սրբոյն Սեղբեստրոսի ասեն տուեալ ի պարգև Լուսաւորչին. Երկու նկարագրութիւնն* իրար չեն բռնում՝ երևումէ, որ երկուսը միևնոյն բանի վերայ չեն խօսում։ **

---

* Թոր. Աղբ. Բ. 57. Ինճ. Աշխարհագր. Ա. 404.

** Հնդստանի Նիկոլ եպիսկոպոսին մօտ էլ մի մասունք եղել է՝ այն է Ս. Լուսաւորչի մատը։ Առասպելական տեղեկութեան նայելով, կարելի է կասկածել մասունքի իսկութեան վերայ։ Տես Բոնի Միութիւնը, 25։